ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-դեկտեմբերի 2023 թվականի № -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի №475Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու մասին» №379-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանվել է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման վերջնաժամկետ՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը, որը «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմումների հիման վրա մի քանի անգամ երկարաձգվել է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը,

բ) Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը նախազգուշացնելու մասին» №475Ա որոշմամբ Ընկերությունը նախազգուշացվել է Որոշմամբ ամրագրված պահանջի խախտման համար և պարտավորեցվել է որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում բաժանորդների հետ կնքել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերը,

գ) Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի №452Ա, 2022 թվականի հունիսի 29-ի №267Ա, դեկտեմբերի 21-ի №555Ա և 2023 թվականի հունիսի 21-ի

№209Ա որոշումներով բաժանորդների հետ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման ժամկետը երկարաձգվել է վեցական ամսով,

դ) Ընկերությունը սույն թվականի դեկտեմբերի 18-ի №ՄՇ/45964 գրությամբ խնդրել է բաժանորդների հետ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման վերջնաժամկետը մեկ տարով երկարաձգել՝ պարզաբանելով, որ 2023 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ պայմանագրեր են կնքվել 611963 բաժանորդների հետ, որը կազմում է տվյալների բազայում գրանցված բաժանորդների շուրջ 92,7 տոկոսը, և որ պայմանագրերի կնքումը սահմանված ժամկետում ավարտելու համար խոչընդոտ են հանդիսանում սեփականատերերի բացակայությունը և ընտանիքի անդամների կամ հասցեում բնակվող այլ անձանց մոտ համապատասխան լիազորություն չունենալը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի բացակայությունը,

ե) Որոշմամբ սահմանման պահից ի վեր խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման ժամկետը մի քանի անգամ երկարաձգվել է, և Ընկերությունը մինչ օրս չի ավարտել բոլոր բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը, այդուհանդերձ, նպատակ ունենալով ապահովել պայմանագրերի կնքման գործընթացի շարունակականությունը, Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում պայմանագրերի կնքման վերջնաժամկետը երկարաձգել վեց ամսով, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը նախազգուշացնելու մասին» №475Ա որոշման 2-րդ կետում «մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «մինչև 2024 թվականի հունիսի 25-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի դեկտեմբերի 25-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
- դեկտեմբերի 2023թ.